
**ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆԻ՝ ՍՆՆԴԱՆՈՒՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ
ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԴԱՐՉՎԱԾԱՅԻՆ ՄԻՎՎՈՐՆԵՐԻ
ՋՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

ԱՇԽԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Ժամանակակից լեզվաբանական գրականության մեջ միասնական մոտեցում չկա նախադասության կառուցվածք և հաղորդակցական նշանակություն ունեցող միավորները դարձվածաբանության կազմում ներառելու վերաբերյալ:

Շատ հետազոտողներ (Բ. Ա. Լարին, Ն. Ն. Ամոսովա)¹ դարձվածաբանական ֆոնդի մեջ չեն ընդգրկում նշված միավորները այն պատճառաբանությամբ, որ դրանք չունեն ամբողջական նշանակություն: Սակայն հարկ է նշել, որ ամբողջական նշանակությունը և համարժեքությունը բառին չեն կարող դարձվածքների առանձնացման հիմնական չափանիշ լինել: Եթե ամբողջական նշանակությունը դարձվածքների առանձնացման կարևոր գործոն համարենք, ապա ստիպված պետք է լինենք նախադասության կառուցվածք ունեցող դարձվածքների հետ մեկտեղ դարձվածաբանական ֆոնդից հանել բառակապակցության կառուցվածք ունեցող շատ դարձվածքներ, քանի որ ցանկացած լեզվում կան բազմաթիվ դարձվածքներ, որոնց կայունությունը բաղադրիչների ոչ թե լիակատար, այլ մասնակի վերահիմաստավորման արդյունք է: Նման դարձվածքները ամբողջական իմաստ չունեն և չեն կարող համարժեք լինել բառին, սակայն նրանց դարձվածային բնույթը դրանից չի տուժում: Բացի այդ, խոսքում նախադասություններով են առկայանում բազմաթիվ բայական դարձվածքներ, որոնք, բնականաբար, ամբողջական իմաստ չունեն, այնուամենայնիվ նրանց դարձվածային բնույթը կասկածի տակ չի դրվում: Եթե այդպես է, ապա միանգամայն անբնական է, թե ինչու պետք է դարձվածաբանական ֆոնդից դուրս մղել նախադասության կառուցվածք ունեցող կայուն միավորները, որոնք վերը նշված բայական դարձվածքներից տարբերվում են միայն նրանով, որ խոսքում առկայանալու նրանց ձևը համընկնում է լեզվում գոյություն ունեցող նրանց ձևին:

Այս հոդվածի նպատակն է ուսումնասիրել հայերենի և անգլերենի հաղորդակցական դարձվածային միավորների կառուցվածքային և ձևաբանական առանձնահատկությունները: Վերլուծության համար հիմք են ծառայում հայերենի և անգլերենի այն հաղորդակցական միավորները, որոնց կազմում կա որևէ սննդանուն բաղադրիչ:

¹ Стен Ларин Б. А. Очерки по фразеологии (О систематизации и методах исследования фразеологических материалов) // "История русского языка и общее языкознание". М., 1977, Амосова Н. Н. Основы английской фразеологии. Л., 1963:

Սննդամուկ բաղադրիչ պարունակող (այսուհետ՝ ՍՊ) հաղորդակցական դարձվածքները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի.

1. հաղորդակցական դարձվածք-ասացվածքներ, որոնք խրատական բնույթ ունեն,

2. բուն հաղորդակցական դարձվածքներ, որոնք օգտագործվում են որոշակի իրավիճակ կամ իրադարձություն նկարագրելու համար:

Ասացվածքների ընդգրկումը դարձվածաբանության մեջ ևս տարակարծությունների տեղիք է տվել: Այն, որ ասացվածքներն արտահայտության կարևոր լեզվական միջոցներ են, ոչ ոք չի ժխտում, սակայն լեզվաբանների կարծիքները երկատվում են այն հարցի շուրջ, թե արդյոք ասացվածքները դարձվածաբանության ուսումնասիրության նյութ են և պետք է ընդգրկվեն դարձվածաբանական ֆոնդի մեջ:

Որոշ հետազոտողներ (Ա. Ա. Մուրվալյան, Ե. Յ. Գևորգյան, Ա. Ի. Մուլոտկով)² ասացվածքները դարձվածաբանական ֆոնդի մեջ չեն մտցնում այն նկատառումից ելնելով, որ դրանք համարժեք չեն բառին կամ բառակապակցությանը: Սակայն, ինչպես արդեն նշվեց, նախադասությունը ևս կարող է հանդես գալ իբրև լեզվական միավոր, և այդ առումով ասացվածքները ևս բացառություն չեն:

Կան նաև հետազոտողներ (Մ. Մ. Կոպիլենկո), որոնք դարձվածաբանական ուսումնասիրություններից բացառում են ասացվածքները՝ գտնելով, որ ասացվածքը «ժողովրդական ստեղծագործության տեսակ է» և պետք է ուսումնասիրվի ժողովրդական բանահյուսության մեջ, ինչպես հեքիաթը կամ առակը³: Սակայն, ինչպես նշում է Ա. Յ. Նազարյանը, մման փաստարկը համոզիչ չէ, քանի որ հեքիաթը և առակը լեզվական նշաններ չեն, այլ ինքնուրույն գեղարվեստական ստեղծագործություններ, որոնք հնարավոր չէ ներմուծել խոսքի մեջ իբրև բաղադրիչ տարր. մինչդեռ ասացվածքն ունի լեզվական նշանին բնորոշ բոլոր հատկանիշները, այն կարող է խոսքի մեջ ներմուծվել իբրև հաղորդակցական լեզվական միավոր՝ նախադասություն, կամ էլ նախադասության մաս կազմել⁴:

Մեր կարծիքով, ասացվածքները դարձվածաբանական ֆոնդից հանելու հիմնավոր պատճառներ չկան, քանի որ նրանց հատուկ են դարձվածքների հիմնական հատկանիշները: Հարց է առաջանում՝ արդյո՞ք բոլոր ասացվածքները պետք է ընդգրկվեն դարձվածաբանության կազմի մեջ, թե՞ ոչ: Հարկ է նշել, որ դարձվածաբանությանը ավանդաբար վերագրվել են միայն փոխաբերական իմաստ ունեցող ասացվածքները: Սակայն փաստերը ցույց են տալիս, որ բոլոր ասացվածքներին, անգամ ուղիղ իմաստ ունեցողներին, հատուկ է վերաիմաստավորման յուրահատուկ տեսակ, այն է՝ նրանք վերաբերում են ոչ թե մի կոնկրետ իրավիճակի, այլ մնանատիպ իրավիճակներին ընդհանրապես: Այսպես օրինակ՝ *Ամեն մարդ կրակը իր բաղադրի տակ է քաշում* - «ամեն մարդ նախ իր օգուտի

² Տե՛ս **Молотков А. И.** Основы фразеологии русского языка. Л., 1977, **Ե. Յ. Գևորգյան**, Հայերենի դարձվածքները, Եր., 1969, **Ա. Ա. Մուրվալյան**, Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն, Եր., 1959:

³ Տե՛ս **Копыленко М. М.** Сочетаемость лексем в русском языке. М., 1973, էջ 14:

⁴ Տե՛ս **Назарян А. Г.** Фразеология современного французского языка. М., 1987, էջ 131:

մասին է մտածում»⁵, *he that will eat the kernel must crack the nut* - «ով աշխատի, նա կուտի» դարձվածքները թեև ուղիղ իմաստ ունեն, բայց գործածվում են ոչ թե կոնկրետ իրավիճակ ցույց տալու համար, այլ նմանատիպ իրավիճակների ամբողջ դասի համար առհասարակ: Այդ է նաև պատճառը, որ լեզվից լեզու նույնիմաստ դարձվածք-նախադասությունները կարող են բոլորովին տարբեր բառային կազմ ու կառուցվածք ունենալ, ինչպես երևաց բերված օրինակում, որ առհասարակ հատուկ է դարձվածային միավորներին: Հետևաբար, մեր կարծիքով, բոլոր ասացվածքները պետք է դառնան դարձվածաբանության ուսումնասիրության նյութ:

Հարկ է նշել, որ ասացվածքներին հատուկ են ինչպես լեզվական միավորներին բնորոշ հատկանիշներ, այնպես էլ դրանց ազատ նախադասություններից կամ կայուն, բայց դարձվածային բնույթ չունեցող այլ կապակցություններից տարբերակող հատկանիշներ:

Ինչպես սովորական նախադասությունների, այնպես էլ դարձվածք-նախադասությունների ամենակարևոր առանձնահատկությունը ստորոգումն է, թեև հանդիպում են թերի և միակազմ դարձվածք-նախադասություններ, որոնցում բայական անդամը զեղչված է, այսինքն՝ ստորոգումը բացահայտ (էքսպլիցիտ) չէ: Ընդ որում, թերի նախադասություններում զեղչված անդամները վերականգնելու կարիք չկա, քանի որ այդ դեպքում դրանք կորցնում են իրենց արտահայտչականությունն ու գունեղությունը: Այսպիսի նախադասություններում առաջին պլան է մղվում հնչերանգը, որը ստորոգման դեր է կատարում: Ինչպես օրինակ՝

Որտեղ տանձ՝ պոչը վրան - «ամեն բան կարող է նաև որոշ թերություններ՝ պակասություններ ունենալ»,

From the sweetest wine, the tarest vinegar - «սիրուց մինչև ատելություն մի քայլ է»:

Անհրաժեշտ է նշել, սակայն, որ արտաքին քերականական ձևավորվածությունը դեռևս բավարար պայման չէ տվյալ միավորը հաղորդակցական դարձվածք համարելու համար, այլ պարտադիր է մտքի ավարտվածություն ունենալը, այսինքն՝ տրամաբանական իմաստ արտահայտելը: Այսպիսով, ըստ մեզ, դարձվածք-նախադասությունների էական և պարտադիր հատկանիշներն են ստորոգումը, հնչերանգը և մտքի ավարտվածությունը, իսկ նախադասություններին հատուկ քերականական կարգերը (դեմք, թիվ, ժամանակ, եղանակ) ածանցվում են հենց նրանցից:

Խ. Գ. Բադիկյանն իր գրքում անդրադարձել է սովորական նախադասությունների և դարձվածք-նախադասությունների տարբերություններին⁶, որոնք մենք դիտարկել ենք մեր նյութի հիման վրա և տեղայնացրել: Ներկայացնենք այդ տարբերությունները:

⁵ Դարձվածքների իմաստները ներկայացնում ենք ըստ բառարանների տվյալների՝ **Ա. Մ. Սուքիասյան, Ս. Ա. Գալստյան**, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր., 1975, **Խ. Գ. Բադիկյան**, Ուսումնական դարձվածաբանական բառարան, Եր., 2002, **Ս. Ս. Սեֆերյան, Ա. Ա. Լազարյան**, Անգլերեն-հայերեն դարձվածաբանական բառարան, Եր., 2005, **Кунин А. В.** Англо-русский фразеологический словарь (в двух томах). М., 1967:

⁶ Տե՛ս **Խ. Գ. Բադիկյան**, ժամանակակից հայերենի դարձվածային միավորները (կառուցվածքային վերլուծություն), Եր., 1986, էջ 299-305:

1. Դարձվածք-նախադասությունները պատրաստի միավորներ են: Դրանք ոչ թե սովորական նախադասությունների նման ամեն անգամ նորից են կազմվում, այլ վերարտադրվում, խոսքի մեջ ներմուծվում են պատրաստի ձևով:

2. Դարձվածք-նախադասություններին հատուկ է բառային կազմի կայունությունը և դրանով պայմանավորված՝ նաև իմաստի ու կիրառության կայունությունը: Դարձվածք-նախադասություններում բաղադրիչների փոփոխություն, դրանց օտարում կամ հավելում հնարավոր չէ կատարել, քանի որ բաղադրիչներն իմաստային ամենասերտ կապերով են իրար կապված, և դա կբերի դարձվածքի իմաստազրկման: Թեև սակավաթիվ դեպքերում հնարավոր է բաղադրիչների փոփոխություն, բայց դա անպայմանորեն կատարվում է փոփոխվող բաղադրիչին իմաստով մոտ բառով: Ընդ որում, հարկ է նշել, որ փոփոխվող բաղադրիչը ևս վերաիմաստավորված արժեք պետք է ունենա, որպեսզի դարձվածքի իմաստի փոփոխություն չառաջացնի: Հետաքրքրական է այն, որ զուգադրվող լեզուներից հայերենում որպես փոփոխվող բաղադրիչներ հիմնականում հանդես են գալիս բայերը, հատկապես բարբառային տարբերակները, կամ նույն բայի խոնարհված ձևերը: Գոյականական բաղադրիչի փոփոխությունը ավելի քիչ է հանդիպում, և այստեղ ևս հիմնականում բարբառային տարբերակներով են փոխարինվում: Ինչպես օրինակ՝

Եղել է, յուղն/եղն էլ վրան պաղել է/գյուղել է - «կատարվել է, դեռ մի բան էլ ավելին»,

Քարն էլ է իր ձեռին, պոպոքն/ընկույզն էլ - «անել, ինչպես կամենալ. ազատ գործել, ամեն իրավունք ունենալ ուզածն անելու (հատկապես իշխանավորների մասին)»:

Անգլերենի՝ սննդանուն պարունակող հաղորդակցական դարձվածք-նախադասություններում բաղադրիչի փոփոխության օրինակներ մեզ չեն հանդիպել:

3. Ի տարբերություն սովորական նախադասության, որտեղ շարադասությունը ազատ է, դարձվածք-նախադասություններում այն կայուն է:

4. Դարձվածք-նախադասություններում ստորոգյալը լրիվ հարացույց չունի, այն գործածվում է եղանակաժամանակային այն ձևով ու դեմքով միայն, որով կաղապարվել է որպես դարձվածք, մինչդեռ սովորական նախադասություններում ստորոգյալը կարող է հանդես գալ եղանակաժամանակային բոլոր ձևերով ու դեմքերով:

5. Դարձվածք-նախադասությունները հնարավոր չէ փոխակերպել, այսինքն՝ պարզ նախադասությունները վերածել բարդի, բարդերը՝ պարզի:

Մեր նյութը կարելի է դիտարկել նաև կառուցվածքի տեսանկյունից: Ինչպես ցույց է տալիս կատարված զուգադրական վերլուծությունը, ՍՊ դարձվածք-նախադասություններն ըստ կառուցվածքի լինում են՝ 1. պարզ և բարդ, 2. միակազմ և երկկազմ, 3. լրիվ և թերի, 4. շաղկապավոր և անշաղկապ:

Քննենք դրանցից յուրաքանչյուրն առանձին-առանձին:

1. Պարզ և բարդ

ա) Պարզ նախադասություններով արտահայտված դարձվածքները լինում են պարզ համառոտ և պարզ ընդարձակ, ինչպես նաև հաստատական և ժխտական՝ ըստ արտահայտած մտքի և իրականության փոխարարբերության:

• **Պարզ համառոտ** նախադասություններն ավելի սակավաթիվ են (3 միավոր հայերենում, 4 միավոր անգլերենում): Ինչպես օրինակ՝

Աչքում յուղ կա - «1. դուրեկան, գրավիչ աչքեր ունի, 2. դեռ երիտասարդ է, զեղեցիկ է, հաճելի արտաքին ունի»,

Աղը լացել է/ լաց է եղել - «(տունը, բնակարանը) խոնավացել է»,

Գինին դարձել է/ շուռ է եկել - «գինին սկսել է թթվել»,

Praise is not pudding - «մի բան է գովել խոսքով, այլ բան՝ գործով»,

The grapes are sour - «խաղողը խակ է (անհասանելի և դրա համար մերժվող բան)»:

• Ձուգադրվող լեզուներում ավելի շատ են հանդիպում **պարզ ընդարձակ** հաստատական նախադասություններով կազմված ՍՊԴ-ները (33 միավոր հայերենում, 50 միավոր անգլերենում): Օրինակ՝

Աղ ու հացը ուժով է եղել - «ուրիշներին շատ երախտիք գործած լինելու, շատ բարերարություն անելու շնորհիվ է մեծ փորձանքից ազատվել»,

Կերածը տան հաց է - «աղքատ չէ, բարեկեցիկ վիճակում է գտնվում»,

Արևը ջուր է խմում - ասվում է, երբ արևը մերթ ամպերի տակ է ծածկվում, մերթ դուրս է գալիս,

Little fish are sweet - «անգամ փոքր նվերը կամ քիչ գումարը հաճելի, ցանկալի է»,

Honey catches more flies than vinegar - «քաղցր խոսքով ավելի շատ բանի կարելի է հասնել, քան կոպտությամբ»,

Sauce is better than the fish - «համեմունքը ուտելիքից լավն է (ասվում է այն գրքերի մասին, որոնցում պատկերազարդումները բովանդակությունից լավն են)»,

Too many cooks spoil the broth - «չափից շատ խոհարարները փչացնում են ապուրը. եթե մի գործի մեջ շատ մարդ է խառնված, այն լավ չի ստացվում»:

Ներկայացնենք նաև պարզ ընդարձակ ժխտական նախադասություններով կազմված ՍՊԴ-ի օրինակներ հայերենում և անգլերենում:

Պապն ամեն օր գաթա չի ուտի - «միշտ հաջողություն չի լինի. ամեն անգամ չէ, որ մարդուն հաջողություն է սպասում կամ բախտը բերում է»,

Նրանից հավկիթ առնողը մեջը դեղնուց չի գտնի - «խարդախ, խաբեբա մարդ է»,

Միսն առանց ոսկորի չի լինի - «ամեն բան կարող է նաև որոշ պակասություններ՝ թերություններ ունենալ»,

(մեկի, ոչ մեկի) ընկույզին քար չի նետի - «անշահախնդիր մարդ է, քջով էլ բավարարվում է, ուրիշին վնաս չի հասցնում»,

Life is not all cakes and ale - «կյանքը հեշտ բան չէ»,

Butter to butter is no relish - «միօրինակությունը ձանձրացնում է»,

Man doesnt live by bread alone - «ոչ միայն հացիվ...»,

I like not barrel or herring - «ոչ մեկն էլ չեն հավանում (ո՛չ տակառը, ո՛չ ծովատառեխը)»:

բ) Բարդ նախադասություններով կազմված ՍՊԴ-ները երկու լեզվում էլ սակավաթիվ են (18 միավոր հայերենում, 14 միավոր անգլերենում): Դա պայմանավորված է դարձվածքի կարևոր առանձնահատկություններից մեկով՝ հակիրճության ձգտումով: Բարդ նախադասություններով կազմված սննդանուն բաղադրիչներով դարձվածքները լինում են բարդ համադասական և բարդ ստորադասական:

Բարդ համադասական նախադասությունները կազմված են բառային միջոցներով և շարահարությամբ քերականորեն միմյանց հետ կապակցված երկու կամ ավելի համազոր նախադասություններից: Բառային միջոցները համադասական շաղկապներն են՝ *և, ու, կամ, բայց, իսկ* և այլն: Շարահարության դեպքում մեծ դեր է կատարում հնչերանգը:

Նշենք, որ անգլերենում խիստ հազվադեպ են բարդ համադասական նախադասության կառուցվածք ունեցող միավորները (սննդանուն բաղադրիչներով), ընդ որում՝ վերջիններս կապակցված են համադասական շաղկապներով, իսկ հայերենում հանդիպող նմանատիպ դարձվածքները բազմաթիվ են և հիմնականում շարահարությամբ են կապակցված:

Տանձն էլ հասավ, խնձորն էլ կարմրեց - «մի բան անելու իսկական ժամանակն է»,

Տանձը կոթ ունի, խնձորը քիթ ունի - «շատ բժախնդիր է, ամեն բանի անուն է դնում»,

Թթու բան չէ, ամեն մարդու բան չէ - «միայն տվյալ անձն է կարող կատարել այդ գործը, լուծել այդ հարցը. ուրիշն ի վիճակի չէ դա անել»,

God sends meat and the devil sends cooks - «աստված մարդկանց միս ուղարկեց, սատանան՝ խոհարարներ»:

Բարդ ստորադասական նախադասությունները կազմված են մեկ գլխավոր և մեկ կամ մի քանի ստորադաս նախադասություններից, որոնք ևս միմյանց հետ կապակցվում են բառային միջոցներով և շարահարությամբ: Որպես բառային միջոցներ օգտագործվում են ստորադասական շաղկապները՝ *թեև, որ, որպեսզի, եթե, մինչև*, և շաղկապական բառերը: Որպես շաղկապական բառեր գործածվում են հարաբերական դերանունները (*երբ, այնքան... որքան, այնպես... ինչպես, կարծես, as...as, as if, if* և այլն), օրինակ՝

Այնպես է նայում ինձ (քեզ, նրան), ինչպես թուրքը խոզի մսին - «զգվում է մեկից կամ մի բանից. ինչ-որ բան պիղծ է համարում»,

There are as good fish in the sea as ever came out of it - «աշխարհում դեռ տեղ կա, ելք գտնել դեռ կարելի է»,

One/he looks as if butter wouldnt melt in ones mouth - «մեղմահեզ մարդու տեսք ունի, սուս ու փուս մարդ է, մրջյուն էլ չի տրորի (քաղաքավարի, սիրալիր ու ընկերական է, բայց ոչ անկեղծ)»,

When wine is in truth/wit is out - «հենց գինին մտավ փորը, ճշմարտությունը դուրս թռավ բերանից. ինչը սթափ մարդու մտքում է, հարբածի լեզվին է»:

Ստորև ներկայացնում ենք նաև շաղկապներով կապակցված բարդ ստորադասական նախադասության կառուցվածք ունեցող ՍՊԴ-ների օրինակներ հայերենում և անգլերենում.

Մինչև աղը հասավ, մատաղը վերջացավ - «ինչ-որ բան ուշացավ, իր նպատակին չծառայեց»,

We never know the value of water, till the well is dry - «մեկին կամ մի բան կորցնելուց հետո ենք գիտակցում նրա արժեքը»:

Շարահարությամբ կապակցվելու դեպքում մեծ դեր է կատարում հնչերանգը, ընդ որում՝ հայերենում բարդ ստորադասական նախադասությունները հնչերանգով կապակցվելիս տրոհվում են բութով:

Յուղ թափես/լցնես՝ կհավաքվի - «շատ մաքուր տեղ է (տուն, փողոց, բակ, հատակ)»,

Աղբյուրը գնա՝ ջուրը կցամաքի - «ծախորդ մարդ է, ինչ գործի ձեռք տա, կամ ինչ գործ որ ձեռնարկի, անհաջողության կհանդիպի»,

Խնձոր գցես՝ գետին չի ընկնի - «ասեղ գցելու տեղ չկա, չափից շատ ժողովուրդ է հավաքված»:

Միայն անգլերենում են հանդիպում բարդ ստորադասական նախադասության կառուցվածք ունեցող այնպիսի ՄՊԴ-ներ, որոնցում ստորադասական նախադասությունը ներմուծվում է *that* կամ *who* շաղկապներով և միջադաս դիրք ունի, գտնվում է *he* դերանվան և գերադաս նախադասության մյուս անդամների միջև: Ներկայացնենք այդպիսի օրինակներ.

he who touches honey licks his finger - «Մեղր ծախողը մատը կլիզի»,

he that would have eggs must endure the cackling of hens - «Ձու ես ուզում, պիտի դիմանաս հավերի կչկչոցին. եթե ինչ-որ բան սիրում ես, դա անել էլ սիրիր»:

Չետաքրքրական փաստ է նաև այն, որ հայերենի ստորադաս բաղադրիչ նախադասությունները հիմնականում նախադաս կիրառություն ունեն: Ըստ Խ. Բաղիկյանի՝ պատճառն այն է, որ հայ ժողովրդի լեզվամտածողության մեջ առաջին պլան է մղվում ոչ թե պայմանը, այլ հետևանքը (*եթե սրտում տեղ չի, կճուճում էլ եղ կլիճի*), ոչ թե գործողությունն ու այն կատարողը, այլ ժամանակը (*մինչև աղը հասավ, մատաղը վերջացավ*), ոչ թե գործողությունը, այլ նրա հետ կապված տեղը և այլն⁷:

Մինչդեռ անգլերենում ստորադաս բաղադրիչ նախադասությունները հիմնականում միջադաս և վերջադաս են: Ինչպես օրինակ.

he who would eat the nut must first crack the shell - «ուզում ես ընկույզ ուտել, կեղևը մաքրիր»,

the cat shuts its eyes when stealing cream - «մարդկանց հատուկ է աչք փակել սեփական մեղքերի վրա. հմմտ.՝ իր աչքի գերանը չի տեսնում, ուրիշի աչքի ծեղը/ փուշը տեսնում է»,

the gods send nuts to those who have no teeth - «Աստված փլավն ում է տալիս, ատրժակն ում»:

Այսպիսով, բարդ նախադասության կազմում հանդես եկող պարզ նախադասություններն իմաստային առումով սերտորեն կապված են միմյանց հետ (հատկապես բարդ ստորադասական նախադասություններում), և դրանք անկախ գործածություն չունեն, քանի որ դարձվածքից դուրս իմաստագրվելու են:

⁷ Տե՛ս Խ. Գ. Բաղիկյան, նշվ. աշխ., էջ 322:

2. Միակազմ և երկկազմ

Հիմնականում հանդիպում են երկկազմ նախադասություններ, իսկ սակավաթիվ միակազմ նախադասությունները մեծ մասամբ բայական են, այսինքն՝ դրանց գերադաս անդամը բայ է: Միակազմ բայական դարձվածք-նախադասությունների առանձնահատկությունն այն է, որ դրանք չունեն ենթակա, իսկ դիմավոր բայով արտահայտված գործողությունը ոչ թե կոնկրետ մեկին է վերաբերում, այլ ընդհանրական իմաստ ունի և հավասարապես վերագրվում է մյուս դեմքերին:

Ձուր խմած աղբյուրը քար չեն գցի - «եթե մի բանից օգտվել ես, չի կարելի այն վատաբանել, նրա մասին վատ խոսել»,

Լավություն արա, ջուրը գցի - «պետք չէ արած լավության համար հատուցում ակնկալել»,

Never fry a fish till its caught = Gut no fish till you get them - «ժամանակից շուտ մի ուրախացի՛ր» հմնտ.՝ *ճտերն աշնանն են հաշվում*,

Dont teach your grandmother to suck eggs - «նոր հավեր են դուրս եկել, երկաթե ձվեր են ածում. ինձնից ծնվել, ինձ լող տալ է սովորեցնում»:

Ներկայացված օրինակներում ենթակա չունենք, և դրա վերականգնումը հնարավոր չէ, քանի որ խորհուրդ է տրվում ոչ միայն երկրորդ դեմքով (բոլոր անգլերեն օրինակներում) կամ երբեմն նաև երրորդ դեմքով (որոշ հայերեն միավորներում) դրված անձին, այլ բոլորին:

3. Լրիվ և թերի

Թերի նախադասություններում զեղչված է ստորոգյալը կամ հանգույցը: Ինչպես օրինակ՝

Փլավ/ճաշ ես եփել, ինքդ էլ կեր - «ինչ գործ ձեռնարկել ես, ինքդ էլ արդյունքը վայելի՛ր»,

Արջը խաղող գտավ, տանձը մոռացավ - «ասվում է այն դեպքում, երբ մարդ սովորականի փոխարեն գայթակղվում է նոր, ավելի հաճելի բանով»,

Where bees are, there is honey - «ջանասիրությամբ կարելի է հասնել հարստության, քրտնաջան աշխատանք է պետք կարողություն ստեղծելու համար»,

Whats sauce for goose, is sauce for the gander - «այն, ինչ լավ է մեկի համար, պետք է լավ լինի նաև մյուսի համար, չափանիշը պետք է մեկը լինի»:

Հանդիպում են նաև՝

ա) թերի նախադասություններ, որոնցում առաջին նախադասության մեջ կա ստորոգյալ կամ հանգույց, իսկ երկրորդում այն զեղչված է, ինչպես օրինակ՝

Ոչ շամփուրն էրվի, ո՛չ խորովածը - «1. անկողմնակալ լինել, ոչ մեկին չվնասել. հոգուտ կամ ի վնաս մեկի հարցը չլուծել, 2. հեզն.՝ ինչ-որ հարցեր վճռելիս չի կողմնորոշվում»,

Սերը սովորն է կերել, թանը՝ մոլորը - «կյանքի բարիքներից մշտապես նա է օգտվում, ով լավ է հասկանում դրանց արժեքը»:

բ) նախադասություններ, որոնց երկու բաղադրիչ նախադասություններում էլ ստորոգյալները կամ հանգույցները զեղչված են:

Որտեղ տանձ՝ պոչը վրան - «ամեն բան կարող է նաև որոշ պակասություններ՝ թերություններ ունենալ»,

էրված սրտին՝ սոխ մխիթար - «չնչին բանով իրեն մխիթարել (խայտառակությունը քողարկելու նպատակով, կոտոր չընկնելու համար)»,

Պանիր հաց/սոխ ու հաց/աղ ու հաց՝ սիրտը բաց - ասվում է հյուրասեր մարդու մասին,

From the sweetest wine, the tartest vinegar - «սիրուց մինչև ատելություն մի քայլ է»:

4. Շաղկապավոր և անշաղկապ

Հարկ է նշել, որ շաղկապներով կազմված դարձվածք-նախադասությունները բազմաթիվ չեն: Հայերենում հանդիպում են *մինչև, եթե, կամ... կամ, ո՛չ...ո՛չ* շաղկապներով, իսկ անգլերենում՝ *and, but, if* և *till* շաղկապներով ձևավորված միավորներ: Ստորև ներկայացնում ենք շաղկապներով կազմված ՍՊԴ-ների օրինակներ.

Ոչ աղ է, ո՛չ համեմ - «խսկց.՝ քիչ է, բավարար չէ»,

Կամ աղն է պակաս, կամ մաղը - «ինչ-որ բանի կարիք ունի»,

If life hands you lemons, make a lemonade - «պետք չէ հուսահատվել դժվարություններից». հմմտ. *չկա չարիք առանց բարիքի*,

If you sell the cow, you sell her milk too - «եթե կովը վաճառում ես, նրա կաթն էլ ես վաճառում. մի բան անելուց հետո մանրուքների համար լաց չեն լինում»:

Այսպիսով, թեև սննդանուն պարունակող դարձվածքներ հանդիպում են վերը նշված բոլոր կառուցվածքային տիպերով, բայց դրանց տեսակարար կշիռը նույնը չէ: Դրա մասին վկայում են ստորև ներկայացվող աղյուսակի տվյալները հայերենի և անգլերենի հաղորդակցական դարձվածքների կառուցվածքային տիպերի վերաբերյալ:

Հաղորդակցական դարձվածքների կառուցվածքային տիպերը	ՍՊ հաղորդակցական դարձվածքների թիվը	
	հայերենում	անգլերենում
	54	68
Պարզ նախադասություններ	36	54
<i>պարզ համառոտ</i>	3	4
<i>պարզ ընդարձակ</i>	33	50
Բարդ նախադասություններ	18	14
<i>բարդ համադասական</i>	10	2
<i>բարդ ստորադասական</i>	8	12

Ինչպես երևում է աղյուսակից, թե՛ մեկ և թե՛ մյուս լեզվում գերակշռում են պարզ նախադասություն ունեցող հաղորդակցական դարձվածքները: Դա պայմանավորված է դարձվածքների գործառական նշանակությամբ, այն է՝ սեղմ, հակիրճ, պատկերավոր բնութագրել որևէ իրադարձություն, իրավիճակ կամ երևույթ:

Ձևաբանական առումով հայերենի և անգլերենի սննդանուն պարունակող հաղորդակցական դարձվածքներն օժտված են եղանակի և ժամանակի քերականական կարգերով:

Հայերենի և անգլերենի ՍՊ հաղորդակցական դարձվածքների բայական բաղադրիչը կարող է գործածվել սահմանական և հրամայական եղանակներով, սակայն դրանք հավասարաչափ չեն բաշխված, ինչպես վկայում են ստորև ներկայացվող աղյուսակի տվյալները:

Եղանակի և ժամանակի քերականական կարգի արտահայտումը ՍՊԴ-ներում	Դարձվածքների թիվը	
	հայերենում 54	անգլերենում 68
Սահմանական եղանակ		
Ներկա ժամանակ <i>ա. ներկա անորոշ</i> <i>բ. ներկա վաղակատար</i> <i>գ. ներկա շարունակական</i>	31 7 -	54 2 1
Անցյալ ժամանակ Ապառնի ժամանակ	3 7	1 1
Հրամայական եղանակ	3	6
Հարկադրական եղանակ	2	-
Ըղծական կամ ենթադրական եղանակ	1	3

Ինչպես նկատում ենք աղյուսակից, սննդամուն պարունակող հաղորդակցական դարձվածքների գերակշիռ մասում բայական բաղադրիչը գործածված է սահմանական եղանակով, ընդ որում՝ ամենատարածված ժամանակը ներկա ժամանակն է: Դա կարելի է բացատրել նրանով, որ նշված ժամանակաձևը, արտահայտելով ընդհանուր ժամանակի գաղափարը, առավել մեծ կիրառություն ունի հատկապես կենդանի խոսակցական լեզվում, որում էլ առկայանում են հաղորդակցական դարձվածքները: Այսպես օրինակ՝

Թևերի տակ ձմերուկ չի մտնում - «շատ է գոռոզացել՝ մեծամտացել, հետը խոսել չի լինում»,

Քոստո այծը աղբյուրի ակից է ջուր խմում - «անարժան մարդը միշտ իրեն առաջ է գցում, իր արժանիքներից բարձր բաների է ձգտում»,

There is truth in wine - «հարբած մարդը ճիշտն է ասում»,

Hunger is the best sauce - «քաղցը ամենալավ համեմունքն է»,

The kings cheese goes half away in parings - «լավ բանը շատ մարդիկ են աշխատում ձեռք բերել»:

Ներկա ժամանակի մյուս ենթատեսակներով առկայացած ՍՊ հաղորդակցական դարձվածքները զուգադրվող լեզուներում շատ չեն (7 միավոր հայերենում, 3 միավոր անգլերենում):

Մի խածած խնձոր չի տվել - «ոչ մի բարիք չի արել, ոչ մի օգուտ չի տվել»,

There has been many a peck of salt eaten since - «շատ քրեր են հոսել այդ ժամանակից»,

The cake is getting thin - «փողը/ս վերջանում է»:

Երկու լեզվում էլ հանդիպում են ապառնի ժամանակով առկայացած ՍՊ հաղորդակցական դարձվածքներ, թեև դրանց թիվը ներկա ժամանա-

կով կաղապարված դարձվածքների համեմատությամբ շատ ավելի քիչ է (7 միավոր հայերենում, 1 միավոր անգլերենում): Ներկայացնենք նման դարձվածքներ.

Մեղր ծախողը մատը կլիզի - «որևէ գործի մասնակիցը կամ իրականացնողը լրացուցիչ շահ՝ օգուտ կստանա»,

Կարմիր ծուն գատկին կազի - «ամեն բան իր ժամանակին է պատշաճ»,

He that will eat the kernel must crack the nut - «ով աշխատի, նա կուտի»:

Ավելի սակավաթիվ են անցյալ ժամանակով կաղապարված ՍՊ հաղորդակցական դարձվածքները (ընդամենը 3 միավոր հայերենում, 1 միավոր անգլերենում), ինչպիսին են օրինակ՝ *Տանձ էլ հասավ, խնձորն էլ կարմրեց, Արջը խաղողը գտավ, տանձը մոռացավ, I didnt get a sausage* - «ոչինչ չստացա, չվաստակեցի» դարձվածքները:

Մյուս եղանակներից համեմատաբար ավելի ակտիվ է հրամայական եղանակը, ընդ որում՝ հրամայական եղանակով կաղապարված դարձվածք-նախադասություններն առավել բնորոշ են անգլերենին (3 միավոր հայերենում, 6 միավոր անգլերենում):

Հաց ու պանիր՝ կեր ու բանիր - «մնա՛ և աշխատի՛ր այնտեղ, որտեղ համեստ ապրուստ կարող ես գտնել»,

Բերանը ասի մը աղ/պուտ մը աղ դիր՝ մորթե - «հեզ՝ հանդարտաբարո մարդ է»,

Դատարկ փորին մի ջուր տուր՝ երթա - «հնարագիտությամբ քեզանից հեռացրու, ճանապարհ դի՛ր»,

Cast not out the foul water till you bring in the clean = Dont throw out your dirty water before you get in fresh - «հին ջուրը մի թափի՛ր առանց նորը բերելու»,

Never quarrel with your bread and butter - «քեզ կերակրող գործից մի՛ հրաժարվիր»:

Հայերենում հանդիպում են նաև հարկադրական եղանակով կաղապարված ՍՊ երկու հաղորդակցական դարձվածք, ինչպես օրինակ՝

Կերած մեղրը բերնին կծու քացախ պիտի դառնա - «պետք է տուժի իր արածից, գործը վատ պիտի գնա»,

Ձուկ ուտողը փուշը աչքը պիտի առնե - «մի բանից օգտվելիս՝ պետք է հաշտվել և այն վտանգի կամ անհարմարության հետ, որ նրանից ծագում է»:

Խիստ սակավաթիվ, բայց ՍՊ որոշ հաղորդակցական դարձվածքների կազմությանը մասնակցում է նաև ըղձական կամ ենթադրական եղանակը (1 միավոր հայերենում, 3 միավոր անգլերենում), ինչպես օրինակ՝ *Hed take a candy from a baby* դարձվածքն անգլերենում և «*Տանձն ինձ, խնձորն ինձ, սերկևիլն էլ սիրտս կուզի*» դարձվածքը հայերենում, որոնք երկուսն էլ օգտագործվում են «ստոր, ազահ ու աչքածակ մարդու մասին խոսելիս»:

Հայերենի և անգլերենի ՍՊ դարձվածք-նախադասությունների բնորոշ հատկանիշներից է նաև այն, որ բայական բաղադրիչը հիմնականում ներգործական սեռով է կաղապարվում: Թեև զուգադրվող լեզուներում հանդի-

պում են սակավաթիվ դարձվածքներ, որոնցում բայական բաղադրիչը կաղապարվել է կրավորական սեռով: Ինչպես օրինակ՝

Բերանում լորի/բակլա/ոսպ/չիր/սիսեռ չի թրջվի - «բացբերան է, գաղտնիք պահել չգիտի»,

All bread is not baked in one oven - «մարդիկ միանման չեն լինում, մի հորից ու մորից ծնված երեխաները տարբեր են լինում»:

Այսպիսով, կատարված զուգադրական վերլուծությունը թույլ է տալիս ասել, որ հայերենի և անգլերենի՝ սննդանուն պարունակող հաղորդակցական դարձվածքների գերակշիռ մասը պարզ նախադասության կառուցվածք ունի: Դրանք կազմում են քննված 54 հայերեն միավորներից 36-ը և 68 անգլերեն միավորներից 54-ը: Իսկ զուգադրվող միավորները եղանակի և ժամանակի քերականական կարգերի տեսանկյունից դիտարկելիս պարզեցինք, որ ավելի մեծ թիվ են կազմում սահմանական եղանակի ներկա անորոշ ժամանակով կաղապարված միավորները (31 միավոր հայերենում, 54 միավոր անգլերենում):

Ավելին, ՍՊ հաղորդակցական դարձվածային միավորների համեմատական քննությունը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու զուգադրվող լեզուների լեզվակիրների լեզվամտածողության յուրահատկությունների մասին, հասկանալու, թե պատկերավորման որ միջոցներին է նախապատվություն տվել տվյալ ժողովուրդը, և որ սննդանուններն են գործածվել զուգադրվող միավորներում՝ ընդգծելու համար տվյալ ժողովրդի արժեքային նախապատվությունները, վարքագծի կարծրատիպերը, քանի որ ժողովրդի ազգային-մշակութային ինքնագիտակցության փոխանցման գործում կարևոր դեր կատարող հաղորդակցական դարձվածքներում է առավել վառ արտացոլված ազգային-մշակութային աշխարհայացքը: Ըստ այդմ՝ հայերենի հաղորդակցական դարձվածքներում առավել հաճախ հանդիպում են «բաղադր», «տանձ», «խնձոր», «խաղող», «սերկևիլ», «ծմերուկ», «յուղ/եղ», «զաթ», «ընկույզ», «թան», «մատաղ», «խորոված», իսկ անգլերենի համապատասխան միավորներում՝ “fish”, “herring”, “broth”, “wine”, “vinegar”, “cake”, “ale”, “cream”, “lemon”, “candy” սննդանունները:

АШХЕН АЙРАПЕТЯН – Сопоставительный анализ коммуникативных фразеологических единиц (на материале армянских и английских ФЕ, содержащих наименования пищи). – Цель статьи – обосновать точку зрения, согласно которой коммуникативные ФЕ-предложения относятся к фонду фразеологии. Проводится детальный сопоставительный анализ структурных и морфологических особенностей коммуникативных ФЕ. Эти особенности анализируются на материале армянских и английских ФЕ, содержащих наименования пищи. Выявляется, что большинство анализируемых ФЕ имеют структуру простого предложения. Это можно объяснить функциональной значимостью данных единиц – они описывают явления или ситуации выразительно, но кратко. Что касается морфологических особенностей анализируемых ФЕ, то они преимущественно содержат глаголы настоящего времени, т. к. эта форма, выражая общее понятие времени, широко распространена в разговорном языке.

ASHKHEN HAYRAPETYAN – *Comparative Analysis of Communicative Phraseological Units (based on the material of Armenian and English phrases comprising a food name)*. – The present article aims to disclose whether or not the communicative phrases – sentences should be included in the stock of phraseology. Further the structural and morphological peculiarities of communicative phrases are presented. These peculiarities are discussed on the material of English and Armenian phrases comprising a food name component. It is found out that the majority of the data under consideration are units having the structure of a simple sentence which is accounted for the functional significance of these units – that is to describe vividly but briefly some phenomenon or situation. As for morphological characteristics the discussed PU-s are fixed mostly in the present tense form which can be explained by the fact that this tense expressing the general notion of time is widely used in everyday speech in which PU-s are commonly used.